# Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
# անշարժ գույքի շուկան 2009թ. III եռամսյակում

*Հոդվածը ներկայացնում է ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացված, անշարժ գույքի շուկայի մոնիտորինգի /համակարգված դիտարկումներ/ աշխատանքների արդյունքները և նպատակ ունի քաղաքացիներին իրազեկ դարձնելու ԼՂՀ անշարժ գույքի շուկայի իրավիճակին: Հոդվածում ներկայացվող Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում անշարժ գույքի շուկայական գները ձևավորվել են կոմիտեի ստորաբաժանումների կողմից գրանցված առուվաճառքների գործարքների պայմանագրային գների, մեր կողմից կատարված հարցումների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող անշարժ գույքի գների վերլուծության արդյունքում:*

2009թ. III եռամսյակում կոմիտեի ստորաբաժանումների կողմից իրականացվել է իրավունքների 2167 պետական գրանցում, որոնց քանակը 2009թ. II եռամսյակի համեմատ աճել է՝ 27,8%-ով, իսկ 2008թ. III եռամսյակի համեմատ՝ 4,3%-ով:

Ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների, իրականացված գրանցումների ծավալներն ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008,2009թթ. III եռամսյակներում և 2009թ. II եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխումներն՝ ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների, ունենն հետևյալ բաշխվածությունը.

| | *III եռամսյակ 2008թ.* | *փոփոխումը* | *III եռամսյակ 2009թ.* | *փոփոխումը* | *II եռամսյակ 2009թ* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *945* | *0,1%* | *946* | *68,3%* | *562* |
| Ասկերան | *226* | *3,5%* | *234* | *-14,0%* | *272* |
| Մարտունի | *223* | *39,5%* | *311* | *47,4%* | *211* |
| Մարտակերտ | *193* | *37,3%* | *265* | *18,8%* | *223* |
| Հադրութ | *86* | *30,2%* | *112* | *2,1 անգամ* | *54* |
| Շուշի | *247* | *-53,8%* | *114* | *-32,1%* | *168* |
| Քաշաթաղ | *158* | *17,1%* | *185* | *-9,8%* | *205* |
| ***Հանրապետություն*** | ***2078*** | ***4,3%*** | ***2167*** | ***27,8%*** | ***1695*** |

Նույն ժամանակահատվածում անշարժ գույքի նկատմամբ իրականացված իրավունքների գրանցումներն՝ ըստ տեսակների, ունենն հետևյալ բաշխվածությունը.




2008,2009թթ. III եռամսյակներում և 2009թ. II եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխումներն՝ ըստ գործարքների, ունենն հետևյալ բաշխվածությունը.

| *Գործարքների տեսակները* | *III եռամսյակ 2008թ.* | *փոփոխումը* | *III եռամսյակ 2009թ.* | *փոփոխումը* | *II եռամսյակ 2009թ* |
|---|---|---|---|---|---|
| *Առուվաճառք* | *353* | *1,1%* | *357* | *42 ,2%* | *251* |
| *Նվիրատվություն* | *90* | *26,7%* | *114* | *18,8%* | *96* |
| *Վարձակալում* | *251* | *60,2%* | *402* | *3,1%* | *390* |
| *Գրավադրում* | *385* | *3,4%* | *398* | *2,8 անգամ* | *143* |
| *Ժառանգություն* | *138* | *-5,8%* | *130* | *44,4%* | *90* |
| *Օգտագործում* | *24* | *-37,5%* | *15* | *-37,5%* | *24* |
| *Սեփականաշնորհում* | *218* | *-45,9%* | *118* | *2,8անգամ* | *42* |
| *Մասնավորեցում* | *75* | *-88,0%* | *9* | *-62,5%* | *24* |
| *Առաջնային գրանցում* | *544* | *14,7%* | *624* | *-1,7%* | *635* |
| ***Ընդամենը*** | ***2078*** | ***4,3%*** | ***2167*** | ***27,8%*** | ***1695*** |

2009թ. III եռամսյակում հանրապետությունում ընդհանուր առմամբ իրականացվել է 357 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 42,2%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 1,1%-ով, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ իրականացվել է 131, իսկ բնակելի տների նկատմամբ՝ 45 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում:

2008,2009թթ. III եռամսյակներում և 2009թ. II եռամսյակում Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակների փոփոխություններն ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *III եռամսյակ 2008թ.* | *փոփոխումը* | *III եռամսյակ 2009թ.* | *փոփոխումը* | *II եռամսյակ 2009թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *170* | *-1,8%* | *167* | *2,5 անգամ* | *67* |
| Ասկերան | *40* | *62,5%* | *65* | *-1,5%* | *66* |
| Մարտունի | *41* | *51,2%* | *62* | *19,2%* | *52* |
| Մարտակերտ | *27* | *-25,9%* | *20* | *-44,4%* | *36* |
| Հադրութ | *12* | *50,0%* | *18* | *3,6 անգամ* | *5* |
| Շուշի | *56* | *-71,4%* | *16* | *-30,4%* | *23* |
| Քաշաթաղ | *7* | *28,6%* | *9* | *4,5 անգամ* | *2* |
| ***Հանրապետություն*** | ***353*** | ***1,1%*** | ***357*** | ***42,2%*** | ***251*** |

2008,2009թթ. III եռամսյակներում և 2009թ. II եռամսյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը և նրանց փոփոխությունները՝ ըստ անշարժ գույքի առանձին տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| N | *Անշարժ գույքի տեսակները* | *Առուվաճառքի գործարքների քանակը* | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | *III եռամսյակ 2008թ.* | *փոփոխումը* | *III եռամսյակ 2009թ.* | *փոփոխումը* | *II եռամսյակ 2009թ.* |
| 1 | ***բազմաբնակարան շենքի բնակարան*** | *94* | *39,4%* | *131* | *4,0 անգամ* | *33* |
| 2 | ***առանձնատուն*** | *72* | *-37,5%* | *45* | *36,4%* | *33* |
| 3 | ***արտադրական նշ. օբյեկտ*** | *9* | *11,1%* | *10* | *2,0 անգամ* | *5* |
| 4 | ***հասարակական նշ. օբյեկտ*** | *45* | *-68,9%* | *14* | *-26,3%* | *19* |
| 5 | ***ավտոտնակ*** | *13* | *-61,5%* | *5* | *-44,4%* | *9* |
| 6 | ***հողամաս*** | *120* | *26,7%* | *152* | *0,0%* | *152* |
| | *Ընդամենը* | ***353*** | ***1,1%*** | ***357*** | ***42,2%*** | ***251*** |

2009թ. II և III եռամսյակներում հանրապետության մի շարք քաղաքային համայնքներում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների և բնակելի տների առուվաճառքների գործարքների պայմանագրային գների և կոմիտեի կողմից իրականացված անշարժ գույքի շուկայի դիտարկումների արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական նվազագույն, առավելագույն և միջին գները ու նրանց փոփոխությունները :

## Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գները

| *Քաղաքներ* | *2009թ. II եռամսյակ* | | | *2009թ. III եռամսյակ* | | | *փոփոխումը 2009թ. II եռամսյակի նկատմամբ* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *1 քմ արժեքը /$/* | | | *1 քմ արժեքը /$/* | | | |
| | *նվազագույն* | *առավելագույն* | *միջին* | *նվազագույն* | *առավելագույն* | *միջին* | |
| Ստեփանակերտ | 590,0 | 800,0 | **695,0** | 470,0 | 640,0 | **555,0** | ***-20,0%*** |
| Ասկերան | 130,0 | 165,0 | **147,5** | 100,0 | 130,0 | **115,0** | ***-22,0%*** |
| Մարտունի | 120,0 | 160,0 | **140,0** | 90,0 | 130,0 | **110,0** | ***-21,4%*** |
| Մարտակերտ | 50,0 | 85,0 | **67,5** | 40,0 | 70,0 | **55,0** | ***-18,5%*** |
| Հադրութ | 68,0 | 90,0 | **79,0** | 50,0 | 80,0 | **65,0** | ***-17,7%*** |
| Շուշի | 110,0 | 245,0 | **177,5** | 85,0 | 195,0 | **140,0** | ***-21,1%*** |

*Բնակելի տներ*

| *Քաղաքներ* | *2009թ. II եռամսյակ* | | | *2009թ. III եռամսյակ* | | | *փոփոխումը 2009թ. II եռամսյակի նկատմամբ* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *միջինը 200 քմ շինությամբ և միջինը 1000քմ տնամերձով բնակելի տան արժեքը /$/* | | | *միջինը 200 քմ շինությամբ և միջինը 1000քմ տնամերձով բնակելի տան արժեքը /$/* | | | |
| | *նվազագույն* | *առավելագույն* | *միջին* | *նվազագույն* | *առավելագույն* | *միջին* | |
| Ստեփանակերտ | 68200,0 | 103000,0 | **85600,0** | 55000,0 | 83000,0 | **69000,0** | ***-19,4%*** |
| Ասկերան | 11400,0 | 14600,0 | **13000,0** | 9500,0 | 11300,0 | **10400,0** | ***-20,0%*** |
| Մարտունի | 10000,0 | 12400,0 | **11200,0** | 8300,0 | 10100,0 | **9200,0** | ***-17,8%*** |
| Մարտակերտ | 5500,0 | 8300,0 | **6900,0** | 4100,0 | 7200,0 | **5650,0** | ***-18,1%*** |
| Հադրութ | 5700,0 | 8500,0 | **7100,0** | 4200,0 | 7300,0 | **5750,0** | ***-19,0%*** |
| Շուշի | 7100,0 | 15700,0 | **11400,0** | 6500,0 | 12200,0 | **9350,0** | ***-18,0%*** |

2009թ. III եռամսյակում հանրապետությունում իրականացվել է 402 վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 2,6%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 59,4%-ով:

Վարձակալության գործարքների քանակների փոփոխությունները՝ ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների 2008,2009թթ. III եռամսյակներում և 2009թ. II եռամսյակում ունենն հետևյալ բաշխվածությունը.

| | *III եռամսյակ 2008թ.* | *փոփոխումը* | *III եռամսյակ 2009թ.* | *փոփոխումը* | *II եռամսյակ 2009թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *55* | *-32,7%* | *37* | *-27,5%* | *51* |
| Ասկերան | *52* | *-57,7%* | *22* | *-71,8%* | *78* |
| Մարտունի | *61* | *1,6%* | *62* | *59,0%* | *39* |
| Մարտակերտ | *67* | *55,2%* | *104* | *3,0%* | *101* |
| Հադրութ | *0* | *26-ով ավել* | *26* | *3,2 անգամ* | *8* |
| Շուշի | *5* | *2,2 անգամ* | *11* | *10,0%* | *10* |
| Քաշաթաղ | *11* | *12,7 անգամ* | *140* | *35,9%* | *103* |
| ***Հանրապետություն*** | ***251*** | ***59,4%*** | ***402*** | ***2,6%*** | ***390*** |

2009թ. III եռամսյակում հանրապետությունում գրանցվել է 2450,85 հա ընդհանուր մակերեսով, գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձակալության 299 գործարք, որոնց քանակը և մակերեսնենիհ, ըստ հանրապետության շրջանների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | 2009թ. III եռամսյակում վարձակալված հողամասերի | |
|---|---|---|
| | քանակը | մակերեսը /հա/ |
| Ասկերան | 17 | 122,5 |
| Մարտունի | 60 | 368,54 |
| Մարտակերտ | 58 | 491,9 |
| Հադրութ | 23 | 302,0 |
| Շուշի | 8 | 209,93 |
| Շահումյան | 6 | 70,0 |
| Քաշաթաղ | 127 | 885,98 |
| **Հանրապետություն** | **299** | **2450,85** |

Հանրապետությունում անշարժ գույքի շուկայի դիտարկումները ցույց են տալիս, որ հանրապետության քաղաքներում վարձակալության համար, որպես ակտիվ անշարժ գույքի տեսակներ, հանդես են գալիս Ստեփանակերտում՝ հասարակական նշանակության օբյեկտները, իսկ շրջաններում՝ գյուղատնտեսական նշանակության հողամասերը:

2009թ. III եռամսյակում հանրապետությունում իրականացվել է 398 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 2,8 անգամ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 3,4%-ով:

2008, 2009թ. III եռամսյակներում և 2009թ. II եռամսյակում հանրապետության շրջաններում անշարժ գույքի գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը և նրանց փոփոխությունները՝ ըստ անշարժ գույքի առանձին տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | Անշարժ գույքի տեսակները | Գրավադրված անշարժ գույքի քանակը | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | III եռամսյակ 2008թ. | փոփոխումը | III եռամսյակ 2009թ. | փոփոխումը | II եռամսյակ 2009թ. |
| 1 | բ/բ շենքի բնակարան | 180 | -25,6% | 134 | 2,5 անգամ | 54 |
| 2 | առանձնատուն | 112 | 47,3% | 165 | 3,6 անգամ | 46 |
| 3 | արտադրական նշ. օբ. | 14 | 85,7% | 26 | 2,9 անգամ | 9 |
| 4 | հասարակական նշ. օբ. | 66 | -15,2% | 56 | 93,1 անգամ | 29 |
| 5 | ավտոտնակ | 1 | 5,0 անգամ | 5 | 5,0 անգամ | 1 |
| 6 | հողամաս | 12 | 0,0% | 12 | 3,0 անգամ | 4 |
| | Ընդամենը | **385** | **3,4%** | **398** | **2,8 անգամ** | **143** |

2008,2009թթ. III եռամսյակներում և 2009թ. II եռամսյակում գրավադրման գործարքների քանակների փոփոխությունները` ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | III եռամսյակ 2008թ. | փոփոխումը | III եռամսյակ 2009թ. | փոփոխումը | II եռամսյակ 2009թ. |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *242* | *-18,6%* | *197* | *2,0 անգամ* | *98* |
| Ասկերան | *36* | *41,7%* | *51* | *3,0 անգամ* | *17* |
| Մարտունի | *54* | *16,7%* | *63* | *9,0 անգամ* | *7* |
| Մարտակերտ | *9* | *4,8 անգամ* | *43* | *4,8 անգամ* | *9* |
| Հադրութ | *14* | *85,7%* | *26* | *13,0 անգամ* | *2* |
| Շուշի | *23* | *-26,1%* | *17* | *70,0%* | *10* |
| Քաշաթաղ | *7* | *-85,7%* | *1* | *1-ով ավել* | *0* |
| ***Հանրապետություն*** | ***385*** | ***3,4%*** | ***398*** | ***2,8 անգամ*** | ***143*** |

2009թ. III եռամսյակում հանրապետությունում իրականացվել է 127 սեփականաշնորհման և մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 92,4%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 56,7%-ով:

Սեփականաշնորհման և մասնավորեցման գործարքների քանակների փոփոխությունները` ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների 2008,2009թթ. III եռամսյակներում և 2009թ. II եռամսյակում, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | III եռամսյակ 2008թ. | փոփոխումը | III եռամսյակ 2009թ. | փոփոխումը | II եռամսյակ 2009թ. |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *136* | *-30,9%* | *94* | *2,7 անգամ* | *35* |
| Ասկերան | *10* | *-90,0%* | *1* | *-50,0%* | *2* |
| Մարտունի | *5* | *-80,0%* | *1* | *-50,0%* | *2* |
| Մարտակերտ | *12* | *-83,3%* | *2* | *-75,0%* | *8* |
| Հադրութ | *24* | *-75,0%* | *6* | *50,0%* | *4* |
| Շուշի | *80* | *-92,5%* | *6* | *-60,0%* | *15* |
| Քաշաթաղ | *26* | *-34,6%* | *17* | *17-ով ավել* | *0* |
| ***Հանրապետություն*** | ***293*** | ***-56,7%*** | ***127*** | ***92,4%*** | ***66*** |

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

«Գնահատման և համակարգված դիտարկումների բաժին»
ՀԵՌ : 5-17- 49